Ես սիրում էի երկար կանգնել ու դիտել եկող-գնացողներին, տաճարի պատին թեթեւակի յենւած: Անց ու դարձ անողների թիւը շատ մեծ էր:

Ահա մի չինտօ քահանայ գլխից ցոտ սպիտակ հագած. նրա ետեւից՝ չինականներ իրանց մեծ սնկաձեւ գլխարկներով, եւ կամ զարդարուն մի քաղաքացի՝ հովանոցն ուսին: Նրանք մէկը միւսի ետեւից մօտենում են տաճարի վանդակին, իրանց լուման գցում գանձանակը ու պինդ-պինդ քաշում զանգի թելը, որ կախ է ընկած տաճարի կտրից գանձանակի գլխին: Զանգը մի խուլ հնչիւն է հանում: Աղօթողը երեք անգամ ծափ է տալիս, կարծես աստծոյ ուշադրութիւնը իր վրա գրաւելու համար, եւ սկսում է փսփսալ իր աղօթքը, ձեռքերը իրար շփելով: Նորից մի զանգ, 3 հատ ծափ,— եւ ճապոնացին, վերցնելով պատին թինդ տւած հովանոցը, գնում է իր ճամփով:

Տաճարի մօտ մի այլ շէնքում կարելի է տեսնել քրմուհու պարը:

Բօնզան դանդաղ զարկերով թմբկահարում է իր առաջը դրւած մեծ թմբուկը: Քրմուհին ամբողջովին սպիտակ հագած պտտւում է հանդարտ ու սահուն շարժւածքով, դէմքի սառն ու անվրդով արտայայտութեամբ: Վերջապէս դնում է ձեռքերը ճակատին ու քարանում, որից յետոյ բերում-տալիս է ձեզ իր թալիսմանը. դա մի ոստիկ է սրբազան ծառից, եւ փաթաթւած է սրբազան բառերը գրոտած մի թղթի մէջ:

Այդ պարը, որ կագուրա է կոչւում, փոխաբերական, սիմբոլիկ նշանակութիւն ունի, որի հետ կապւած է հետեւեալ բանաստեղծական աւանդութիւնը: Արեւի աստւածուհին, Ամատերասու, վիրաւորւած իր չար եղբայր Սուզանօից, որ լուսին է, քաշւում է մի քարայր, ամբողջ աշխարհը խորին խաւարի մէջ թողնելով: Բոլոր աստւածներն ու